Այս ամենը միջկուսակցական դաշտի գրեթե ոչնչեն են: Բարեփոխման այնպիսի գործիչների, ինչպես Մեսուտ Յիլմազը, Բյուլենթ Էջեվիթն ու Դենիզ Բայքալը, Բարեփոխության և «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների դաշնային կառավարության ստեղծումը բացառապես տրամաբանվածությամբ իշխանության-ընդդիմության դաշտերի կատաղի բնույթի վերաբերյալ հեռանկարների լայն հիմնք է տալիս: Մեկդիսում թեև Մոհամեդ Յաղբղբոյղլի Մեծ միասնության կուսակցությունն է միայն, որ Էրբաքանի կառավարությանն աջակցելու դատարդություն է հայտնում: Իսկ հաղթանակն այդ կազմակերպությունը շատ հանձնարարություններ ունի: Քանի որ Միջլիսում ընդամենը 7 տեղ է գրավեցնում: Այդ կերդ սառած վստահության ֆոնի հարցը Էրբաքանի կառավարության համար ձեռք է բերում բավական լուրջ բնույթ: հասկանալ այն դեպքում, երբ Բարեփոխության-«Ճշմարիտ ուղի» դաշինքի դեմ երկուսեմ ընդդեմ են տվյալ կուսակցությունների զգալի թվով դատագանվորներ: Չի բացառվում, որ վերջիններս միանան դեռևս Էրբաքան-Չիլլեր բանակցությունների ընթացքում իրենց կուսակցությունների շարքերը լրացնելու: Այդ առումով դատական չէ Յիլմազի հանդիսությունը, թե նոր կառավարությանը վստահության քվեի հարցում լուրջ բարդություններ են առաջանում:

Ինչ վերաբերում է դեսնոսարարների արտաքին, դրանք կառավարության մաս կազմող Բարեփոխության և «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների միջև բաշխվել են 10 : 9 հարաբերակցությամբ: Ընդ որում, իսլամիստ Էրբաքանի կառավարության կազմում Չիլլերի կողմին տեղ են գրաղեկցում նաև տիկին Ըրքալ Սայլրքեն ու Այֆեր Յիլմազը: Եվրոպայի ուժային 3 նախարարի կուսակցական դատկանելությունից կարելի է ենթադրել, որ Չիլլերը կառավարության մեջ տեղի բաշխման հարցում ոչ միայն չի գիջել Էրբաքանին, ընդհակառակը հարկադրել է գիջումների գնալ: Տնտեսվելով լուսավորության նախարարության գործունեությունը Չիլլերը կրոնական վարժարանների ցանցը հերկում բնդլայնելու հնարավորությունից զրկել է Էրբաքանին: Ընդ որում, կրոնական գործերի վարչությունը նաև վերահսկում է «Ճշմարիտ ուղի» կուսակցությունը այն հանձնվել է վերջինիս ներկայացուցիչ դեսնոսարարի ենթակայությանը:

Այս ամենը վկայում է, որ Թուրքիան հազիվ թե գիջի դիրքերը: Որոնց կայացած դեպքում, նրա արտաքին հաղթանակության հիմնական ուղղությունները վաղուց ճշտված են: Որոնք իսլամիստ Բարեփոխության կուսակցության իշխանությունը ոչարդալու կընդլայնի Թուրքիայի ազգային շահերի ու Արևմուտքի նկատմամբ դատարդությունների միջև խոստանալիս Անկարայի հնարավորությունները:

ՏԻԳՐԱՆ ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ
Ազգ վարձագիր

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ

Վերջին համազարկերը

Նախընտրական դայքարը Ռուսաստանում հասավ իր եզրագծին: այսօր, հուլիսի 3-ին տեղի է ունենում նախագահական ընտրությունների երկրորդ եւ հուսանք, վերջին փուլը

Հուլիսի 1-ի ուշ երեկոյան, երբ նախընտրական քարոզչություն վարելու համար թույլատրված ժամկետի ավարտին մնացել էր մեկ ժամից փոքր-ինչ ավելի (ընտրություններից 24 ժամ առաջ ամեն քարոզչություն դադարեցվում է), Ռուսաստանի նախագահության երկու թեկնածուները, Գենադի Զյուգանովն ու Բորիս Ելցինը, հեռուստաէկրանից դիմեցին երկրին ու ժողովրդին:

Զյուգանովը չխորհեց հակառակորդին վարկաբեկելու ոչ այնքան քաղաքակիրթ կեցվածքից, ընդգծելով, որ Ելցինը վախեցավ ուղիղ երեքում իր հետ բանավեճ վարելուց. «իսկ այժմ դա անիմաստ է, որովհետև Ելցինը լավ վիճակում չէ» (ակնարկում էր անառողջ լինելը): Այնուհետև ասաց, որ նախընտրական քարոզչության ողջ ընթացքում իրենով անվերջ վախեցրել են ընտրողին. «Սիա կգա մի ինչ-որ սարսափելի Զյուգանով, իր բիմով, եւ մեզ հետ կվարի, ամեն ինչ կխլեն, ամեն ինչ գրողի ծոցը կգնա», հեգնանքով նշեց նա: Այնուհետև կես առ կես սկսեց հերքել այդ մեղադրանքները. «Ձեզ անընդհատ ասում էին, թե Զյուգանովը հետ է քաշում: Իսկ իրականում Ռուսաստանին վերադարձրել են Պերեյասլավլյան Ռադայի ժամանակները, երբ մենք միավորվում էինք մեր եղբայրական Ուկրաինայի հետ»: Ընդգծելով, որ Ռուսաստանին «հետ են քաշել» դեռի դարասկզբի Կովկասյան դատերազմի ժամանակները եւ որեւէ խոսք չասելով, թե հաղթանակի դեռում ինքն ինչպես է դատկերացնում նաեւ այդ եզրագծից «առաջ գնալը», Զյուգանովն ավելացրեց. «Ասում են, հետ են քաշում, իսկ իրենք ծնել են բանդիտիզմ, հանցագործություններ եւ անարդասանություն, որոնք եղել են հաղաքացիական դատերազմի վերջում»: Զյուգանովի ելույթի ամենադրամատիկ մասը այն էր, երբ նա «մատը դրեց» հասարակության ամենացավոտ վերքին. «Ձեզ անվերջ ասել են, թե ահա կգա Զյուգանովը, եւ ամեն ինչ կխլեն: Տեղին է նկատել, որ հաղաքացիների 80 տոկոսից արդեն խլելու բան էլ չի մնացել», հանգի, ըստ Զյուգանովի, արժեզրկվել, փոշիացել են խնայողությունները, «նեղ օրվա, բաղձանքներ համար հավաքված գումարները»: Այնուհետև դրն Զյուգանովը ակնհայտորեն հանգստացրեց հասարակության մյուս 20 տոկոսին, որից դեռ «խլելու բան կա», նշելով, որ ինքը հիանալի հասկանում է՝ «երբ վաղը կրկին սկսեն հետ վերցնել եւ իրականացնել նոր վերաբաժանում, ապա վաղը չէ մյուս օրը ողջ երկիրը կսկսի բոցկլտալ, ինչպես Չեչնիան»: Զյուգանովը հատուկ ընդգծեց, թե «իրենց գլխավոր բանավեճը դրն Ելցինի հետ այն է, որ իր բլոկը եւ ինքը հանդես են գալիս հանուն ինքնաստիպ, ուժեղ, հարգված եւ արժանապատիվ Ռուսաստանի, որի հետ հաշվի դիտի նստեն բոլորը մեր մոլորակում»: Իսկ ահա Ելցինը, ըստ Զյուգանովի, «այն բանի կողմնակիցն է, որ Ռուսաստանը… նստի «մեծ յոթնյակի» նախաբաղնիում կորցնելով իր ազգային ու դետական արժանապատվությունը»:

Ուստ ընտրողը, հավանաբար, չի կարող իրեն հաշիվ չտալ, որ այդդես արդեն եղել է՝ յոթ երկար ու ծիգ տասնամյակներ «մեր մոլորակում բոլորը հաշվի են նստել» Ռուսաստանի հետ, սակայն հենց դրա հետեւանքով, համաշխարհային ընկերակցությունից օտարվածության ու «արժանապատիվ կտրվածության» արդյունքներով, երկիրը զգալիորեն հետ է մնացել համաշխարհային քաղաքակրթության զարգացումից գրեթե բոլոր բնագավառներում:

Չի կարելի, իհարկե, չնկատել, որ Զյուգանովը ճշտորեն մատնանշում էր այսօրվա առուսական հասարակության խոցերը: Սակայն ինչի՞ հետեւանք են դրանք, որտանո՞վ դրանցում մեղավոր է նաեւ նախորդ վարչահրամայական համակարգը: Դրն Զյուգանովն այս հարցը շրջանցեց, թեեւ լավ հայտնի է, որ տասնամյակներ շարունակ խորհրդային Միությունում բոլոր դժվարությունները հասարակական գիտակցությանն էին ներկայացվում իբրեւ «բուրժուական արտաքին անցյալի» վերադրուկներ: Այդ դրության հետ հիմա չարժե վիճել, սակայն մի՞թե ներկայիս դժվարություններից եւ ոչ մեկը իր արմատները չի առնում ոչ հեռու անցյալից: Թե՞ «բուրժուական անցյալը» կարող էր վերադրուկներ ունենալ, իսկ խորհրդային անցյալը՝ ոչ:

Զյուգանովը խոստացավ իշխանության գալու դեպքում իր քաղաքականության գերակայությունը դարձնել «ազգային արդյունաբերությունն ու ազգային կապիտալը», «կանանց, երեխաների, ծերերի նկատմամբ հոգատարություն ցուցաբերելը»: Իսկ այդ դիտի ինքնամփոփվածությունը ո՞ւր կտանի եւ որտեղի՞ց դետք է վերցվեն այն գումարները, որոնց հաշվին կարելի լիներ ոտի կանգնեցնել ազգային տնտեսությունն ու բարելավել ժողովրդի կենսամակարդակը՝ Զյուգանովը չնշեց: Ակամա հիշողության մեջ արթնանում են սպասիալյան «կամավոր» փոխառությունների սանվերջանալի կամդանիաները, որոնց միջոցով կողոպտվում էին ժողովրդական զանգվածների վերջին կոդեկները, տասնամյակներ հետո, այն էլ հարյուրադատիկ արժեզրկված մարելու տխուր հեռանկարով…

Իր ելույթի վերջում Զյուգանովը կատարեց մի ընդհանրացում, որը գրեթե բառացիորեն կրկնեց նաեւ Ելցինը: «Դուք, հարգելի ընտրողներ, ասաց նա, դետք է հվեարկեք ոչ թե Զյուգանովի կամ Ելցինի օգտին, դիտի ընտրեք ոչ այնքան այս երկուսից մեկին, այլ դիտի ընտրեք կամ ուժեղ, հզոր Ռուսաստան, կամ գաղութային աղմինիստրացիա»: Սա արդեն ուղղակի վիրավորանք էր Ելցինի հասցեին, որովհետեւ դրանով իսկ նա երկրի նախագահին համարեց օտարերկրյա կապիտալի կողմից Ռուսաստանը գաղութացնողների վարչախմբի ղեկավար:

Հակառակ Զյուգանովի, Ելցինի խոսքն ավելի զուսդ էր, զերծ անձնական վիրավորանքներից ու անվայել հարձակումներից: Նա իր հակառակորդի ազգանունը նշեց միայն մեկ անգամ, այն էլ՝ ընդհանրական առումով. «Հուլիսի 3-ին դուք դետք է հվեարկեք ոչ դարգաղես Զյուգանովի կամ Ելցինի օգտին, ապաց ներկա նախագահը, դուք դետք է հվեարկեք ձեզ համար, ձեր ընտանիքի, ձեր երեխաների ապագայի համար, այդ օրը դուք դետք է որոշեք ինչպես ապրել այսուհետեւ»:

Անդրադառնալով այն խնդրին, թե ինչու է հարկավոր անդրսման գնալ ընտրությունների, որովհետեւ «ամենն ծայն այժմ վճռական նշանակություն ունի», Ելցինը նշեց. «Ամենն նոր բան հեշտությամբ չի տվող: Ձգում եմ ձեր տարակուսանքները: Նրանք, ովքեր հունիսի 16-ին հվեարկել էին կոմունիստների օգտին, ծայն չէին տվել հանուն անցյալի վերադարձի, այլ արտահայտվել էին ներկայիս դժվարությունների դեմ»: Ելցինը չժխտեց այդ դժվարությունները եւ, հակառակ Զյուգանովի, չժխտեց իր ու իր վարչախմբի անձնական դատասխանատվությունը դրանց համար, զգացված կերդով նշելով, որ դրանք «իր սրտում ցավով են արձագանվում»: «Սակայն եթե հուլիսի 3-ին մեր փոխարեն հվեարկեն մեր վիրավորանքները, ապաց Ելցինը, աղետ կլինի»: Նա կոչ արեց «բեւաբարի չլինել»: «Ժամանակն է, ապաց Ելցինը, ազատությունը միացնել կարգուկանոնի հետ», ընդգծելով, որ ժողովրդի այդ տրամադրություններն ինքն ընդունել է իբրեւ «գործողությունների ուղղակի ցուցում»: Այստեղ ակնհայտորեն նախագահն ակնարկում էր իր վերջին կադրային փոփոխությունները, գեներալ Լեբեդի առաջադրումը: «Բավական է երկիրը բաժանել կարմիրների եւ սպիտակների, տգիտորով ապաց նա, բավական է դատերազմ զարկվել… Ես իսկակ գիտեմ, թե ինչ է հարկավոր անել, դրա համար կա ուժ, կամք, վճռականություն, ձնում է միայն ձեր սատարումը…»:

Ռուսաստանի հաղաքացի չեմ, բայց անկեղծորեն խոստովանում եմ, որ հուզմունքով էի լսում երկու ելույթն էլ: Այս մեծ երկիրը օտար չէ ինձ, եւ նրա ճակատագիրը, հուզված եմ, անտարբեր չի թողել Հայաստանում գրեթե մեկին: Երկու ելույթներում էլ կային դատը ճշմարտություններ, ցավ, ապագայի հույս, հավատ: Զյուգանովն ավելի ագրեսիվ էր, Ելցինն ավելի հավասարակշռված: Ո՞ւմ կհաջողտա Ռուսաստանը, ո՞ւմ «վերջին համազարկն» ավելի դիպուկ կլինի: Այսօր Ռուսաստանը դատասխան դիտի տա այս հարցին: Ու նաեւ այն բանին, թե թեկնածուներից ո՞վ է ավելի լավ ճանաչում սեփական ժողովրդին, ո՞վ ավելի լավ գիտի նրա հոգեբանությունը եւ ո՞ւմ խոսքն է հասել ընտրողների սրտին ու մտքին:

ԱՌԹԻԼ ՀԻՎԱՆԼԻՍՅԱՆ

ԱԶԳ

Մշակույթ

Հայագիտություն Կանադան չի շրջանցում

Պրոֆեսոր Դորա Սահայանը հասնում է նպատակին

Դորա Սահայանը Կանադայի Մակգիլ համալսարանի գերմանագիտության բաժնի պրոֆեսոր է: Մոնրեալում գտնվող հիշյալ համալսարանը Կանադայում համարվում է առաջինը: Մասամբ պետական է, մասամբ մասնավոր: 13 տարի առաջ մտահղացություն է ունեցել հայագիտությունը ասպիրանտական ներմուծել Կանադա: Անցյալ տարի Մոնրեալի Մակգիլ համալսարանում նրա ջանքերով գումարվեց հայագիտական 5-րդ համաժողովը, որին մասնակցեցին 40-ից ավելի հայագետներ աշխարհի տարբեր երկրներից: Վերջերս պրոֆեսորը Հայաստանում էր եւ Երեւանի պետական համալսարանում կազմակերպված լեզվաբանության գիտաժողովին զեկուցումով հանդես եկավ: Տիկին Սահայանի նախաձեռնությամբ երկու համալսարանների լեզուների ամբիոնների միջեւ պիտի համագործակցություն սկսվի («Ազգը» ժամանակին համառոտ անդրադարձել է դրան): Տարբեր տարիներին հեղինակած դասագրքերից բացի, անցած տարի լույս տեսավ Դորա Սահայանի «Հայկական առածանին» անգլերեն լեզվով, որը առածաբանների գնահատականին է արժանացել:

հայագետներ, որը հիանալի երեւույթ պիտի համարել», ասում է պրոֆեսոր Սահայանը: Նա Society for Armenian Studies ամերիկյան կազմակերպության անդամ է: Այն, ինչ անում է, անշուշտ մաս է կազմում հայագիտական ընդհանուր գործին: Նրա գործունեությունն անցյալ տարի նկատվեց Մակգիլում կազմակերպված հայագիտական 5-րդ գիտաժողովին: «Գիտաժողովի լեզուն անգլերենն է, որ մտերի փոխանակությանը բոլորը կարողանան մասնակցել: Կանադայի հայ գաղութից մասնակցում էին 2-3 հոգի, պրոֆեսոր Հայրիկյանը Հոլանդիայից էր, պրոֆեսոր Լեյմրնը Դանիայից, պրոֆեսոր Քաուեն Միացյալ Նահանգներից: Մասնակիցներ կային Շվեյցարիայից, Ավստրիայից, այլ երկրներից: Գիտաժողովում հնչած զեկուցումների տեմատիկն ամիսներ առաջ տպագրվեցին առանձին գրքով, որի օրինակները հանձնվել են Երեւանի պետական համալսարանին եւ ակադեմիայի գրադարաններին», գիտաժողովի մասին է պատմում Դորա Սահայանը:

Ի տարբերություն մինչ այսօր հայ լեզվաբանությանը նվիրված համաժողովների, կազմակերպվածն ավելի ընդգրկուն էր. ընտրվող հարցերը բավականին ընդարձակ: Օրինակ, ինչությանն արժանացան հայոց լեզվի ուրիշ լեզուներից իր վրա կրած ազդեցությունները, հայերենը տարբեր աշխարհագրական եւ հաղորդակցման միջավայրում ինչպիսի փոփոխություններ է կրել եւ այլն: Ուշադրության արժանացավ Փարիզում խոսվող հայերենը: Լեզվաբանի ասելով, Կանադայի հայ գաղութը համանաբար նոր է եւ այդպիսի փոփոխություններ այնտեղ չեն նկատվում:

1991 թ. Մակգիլ համալսարանում Դորա Սահայանի ջանքերով կազմակերպվել են հայերենի դասընթացներ Հանրալսարանի Continuing Education այսպես կոչված լրացուցիչ դասընթացների շարքում մասնակիցներ երեկոյան ժամը 5-ից հետո հետաքրքրվում են հայերենի դասընթացներին: Մասամբ օտարներ են, որոնք բնավ հայերեն չգիտեն, մասամբ ուսանողներ Մակգիլից, որոնք հայերեն քիչ գիտեն եւ ուզում են կատարելագործվել: Օտարներ ամենատարբեր հետաքրքրություններից ելնելով են հետաքրքրվում այդ դասընթացներին, ասենք լեզվաբան են եւ հայերենն իրենց լրացուցիչ հնդեվրոպական լեզու են ասվորում, կամ անձնական հետաքրքրությունից ելնելով. «Չի կարելի ասել, թե համատարած հետաքրքրություն է նկատվում, բայց հայերենի նկատմամբ հետաքրքրությունը չի տարբերվում մյուս լեզուների նկատմամբ գոյություն ունեցող հետաքրքրությունից, ասում է տիկին Սահայանը: Հեռու ենք այն մտքից, թե դրանով հայագիտության հարցերը լուծված են: Այդ իսկ պատճառով բավական ժամանակ է, որ աշխատանք է ձեռնարկվում հայագիտական ամբիոն ստեղծելու ուղղությամբ: Ծրագրեր են կազմվում, հանդիպումներ են տեղի ունենում համալսարանի ղեկավարության հետ, մասնավորապես խոսակցություն ծավալվում գումարներ հայթայթելու ուղղությամբ: Չէ՞ որ այդ տիպակ ամբիոնի ստեղծումը կապված է հսկայական գումարների հետ, անհրաժեշտ է 2 միլիոն կանադական դոլար: Երկու միլիոնի տոկոսներից է, որ պիտի գոյատեւեմ: Այսինքն ընդարձակ հնարավորություններ այնտեղ չեն լինի, բայց եթե ճիշտ կազմակերպենք մեր աշխատանքը, կկարողանանք առաջանալով մի ծրագիր, որով հայագիտության գծով ասպիրանտուրայում սովորել ցանկացողներ կկարողանան դա անել»: Տիկին Սահայանն ասում է, թե չգիտի այդ ամբիոնում իր դերն ինչ է լինելու: Իմն սնշշոշ օգնում է ծրագրի կազմմանը եւ մասնում ստեղծել հայ լեզվաբանական մի ամբիոն օտարների համար, որտեղ բնավ հայերեն չգիտեն, մասամբ ուսանողներ Մակգիլից, որոնք հայերեն քիչ գիտեն եւ ուզում են կատարելագործվել: Օտարներ ամենատարբեր հետաքրքրություններից ելնելով են հետաքրքրվում այդ դասընթացներին, ասենք լեզվաբան են եւ հայերենն իրենց լրացուցիչ հնդեվրոպական լեզու են ասվորում, պարբերական: Այն կտրվածքի Հայաստանի եւ դրսի հայ լեզվաբանների հոդվածներ, հայագետների կատարած աշխատանքներին կանդրադառնա: Հոդվածների դիմաց հեղինակները չեն վճարվի: «Այդպիսի մակարդակի վրա մտքերի փոխանակություն կատարելը չափազանց կարեւոր է եւ այստեղ ոչ թե նյութական շահը պետք է լի-

նի մեր հետաքրքրությունը, այլ կատարած աշխատանքը ներկայացնելու մտահոգությունը», կարծում է պրոֆեսոր Սահայանը: Պարբերականը լույս կտեսնի անգլերենով, նաեւ ֆրանսերենով: Հոդվածները պիտի բարգմանված ուղարկվեն տեղում միայն խմբագրվելու պայմանով: «Սրանք գեթ օրի մեջ ծրագրեր են, ասում է պրոֆեսորը: Չգիտեմ անգամ, թե պարբերականը ինչ հաճախականությամբ է լույս տեսնելու տարեկան մեկ, երկու, թե երեք համարով»: Տիկին Սահայանի հետ մեր զրույցում անդրադարձանք նաեւ նրա կազմած առածանուն: «Գլխին ավելի 150-ից ավելի էջերից բաղկացած մի ներածություն: Ներկայացնում եմ հայկական առածների նախկնատրվածքը, լեզվաբանական առանձնահատկությունները, հետո խոսում եմ բարգմանական իմ տեխնիկայի մասին եւ առա անդրադառնում երեք կարեւոր բնամանների, հայ ժողովրդի հավատալիքներին, դրանց արտացոլումը առածների մեջ, բնանկան հարաբերություններին, հատկապես նահապետական մտածելակերպի արտացոլումը դրանցում եւ հայկական խոհանոցին: Վերջում բուն առածանին է 12 գլխից բաղկացած», ներկայացնում է հեղինակը: Ըստ պրոֆեսորի, բավական դրական կարծիքներ են եղել, մասնավորապես ճանաչված առածաբան պրոֆեսոր Վոլֆգանգ Միդերը ինքն է առաջինը գրախոսել մի շարք գերադրական արտահայտություններ գործածելով: Գրախոսողը գտել է, որ բոլոր ազգերը Դորա Սահայանի մոդելով պիտի ներկայացնեն իրենց առածների գանձարանը:

Մակգիլ համալսարանի դասախոսի «Ժամանակակից հայոց լեզուն աշխարհի անգլիախոս հանրության համար» դասագիրքն արդեն պատրաստ է: Այն երկու տարի փորձարկվել է համալսարանի լրացուցիչ դասընթացներում: Գործածված մեթոդը նոր է, ժամանակակից եւ անշուշտ կարեւոր կլինի հայերենն ուսումնասիրող օտարերկրացիների համար:

ՄԵԼԻՏԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Դրամբյանի վաստակը ճանաչում են արվեստաբաններ

Պատկերասրահում բացվեց ցուցահանդես, իսկ գիտաժողովը՝ երեկ, այսօր, վաղը

«Ռուբեն Դրամբյան երեւույթը պատահական չէր, ազնվական ընտանիքի զավակը ազնվական կրթություն ստանալով անհնարին էր, որ ազնվական գործ չաներ», երեկ պատկերասրահի հիմնադրի հիշատակին նվիրված ցուցահանդեսը բացելով ասաց Ազգային պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը: 3 ամիսը չհերիքեց, որ հարյուրամյակը բոլորեր (ապրել է 1891-1991), ափսոսանքով ավելացրեց պրն Խաչատրյանը: Պատկերասրահի նախասրահում ներկայացված լուսանկարներում Ռուբեն Դրամբյանն է: Իսկ 3 ընդարձակ սրահ տրամադրված է պատկերասրահի հիմնադրի ստեղծած հավաքածուի ցուցադրմանը: Մարտիրոս Սարյանի 1934-ին վրձնած Դրամբյանի դիմանկարը դիմավորում է սրահ մտնողին: Հավաքածուն ընդգրկում է հայ, ռուս, եվրոպացի նկարիչների կտավներ, խանդակներ: Ցուցադրանոցում Բաբբեուկ Մելիքյանի, Մախոխյանի, Շաբանյանի, Ե. Թադեւոսյանի, Սարյանի, Յակուլովի, Ե. Քոչարի, Հ. Կոջոյանի, Բրյուլովի, Շչեդրինի, Կանդինսկու, Ռերիխի, Պետրով-Վոդկինի, Սոմովի, Լեւիտանի, Ռեպինի, Սերովի, XVII դարի անհայտ նկարիչների, Տինտորետտոյի (16-րդ դ.) Ռուբենսի, Գյոզ ժան Բաշիստի (18-19 դդ.) արժեքավոր կտավներ: Ազգային պատկերասրահի ցուցահանդեսային բաժնի վարիչ Ավետիք Տոնոյանցի գնահատմամբ, մոտ 200 ցուցանմուշ կազմող հավաքածուի ամենաարժեքավոր գործը Սերովի «Ակիմովայի դիմանկարն» է, որի գնորդ են ուզում դառնալ Ռուսաստանի տարբեր բանգարաններ: Արժեքավոր է համարվում նաեւ Տիտարենկոյի, եվրոպական նկարիչներից Պիտեր Կլասի (1597-1661) «Նատյուրմորտը», 19-րդ դարի նկարիչ Ֆ. Գվարդի «Բակը»: Իսկ Ռուբենսին վերնագրվող կտավը հավաստի լինելուց դուրս է: Ցուցահանդեսում ներկայացված կտավներից շատերն են ուղեկցվում Դրամբյանի «Իմ հուշերը» գրքից քաղած մակագրություններով: «Ժան Օնորե Ֆրագոնարի «Ռինալդո եւ Արմիդա» կտավը մեր բանգարանի ֆրանսիական բաժնի գլուխգործոցներից է», մեջբերված է հիշյալ գրքից Ֆրագոնարի կտավի կողքին գտնվող մակագրության մեջ:

Այնուհետ, ինչպես տեղեկացրել էինք «Ազգի» երեկվա համարում, ցուցահանդեսի այցելուները բարձրացան պատկերասրահի 9-րդ հարկի դահլիճ, արվեստաբանական եռօրյա գիտաժողովը սկսելու: «Ռուբեն Դրամբյանի վաստակը ազգային մեծ գործչի վաստակ է, որ պիտի ճանաչենք, գիտաժողովը բացելով ասաց Արվեստի ինստիտուտի տնօրեն Լեւոն Հախվերդյանը: Դրամբյանը ռուսագիր էր, իմ բախտը բերեց բարգմանեցի նրա գրքերը: Ռուբեն Դրամբյանի շնորհիվ ես հասկացա՝ ինչ է նկարչությունը»: Գիտաժողովի եռօրյա նիստերը գումարվում են Ազգային պատկերասրահի դահլիճում (IX հարկ) առավոտյան ժամը 11-ին, գերեկվա նիստերը՝ ժ. 14-ին:

Մ. Ս.

«Քանասեղծ էր դաշնակը...»

Հուշ-երեկո Դավիթ Հովսեփյանի 25-ամյակին

Ընդամենը 18 տարի ապրեց Դավիթ Հովսեփյանը: Ոչխա՞ն անկասար երազներ մնացին: Նրան ճանաչողները կարող են հաստատել, որ գործի նվիրյալ էր: Աղբողներիս բողեց իր իսկ տանը խնամով ստեղծած 2 բանգարան

Հովհաննես Շիրազի եւ Անդրանիկի: 1991-ին «Արեւիկ» հրատարակչությունը լույս ընծայեց Դավթի «Երբ արցունքը խոսել գիտենար» բանաստեղծությունների գրքույկը՝ Համո Սահյանի «Երկու խոսքով»: «Ես մարգարե չեմ, բայց կարող եմ ասել, որ այս պատանին իսկական բանաստեղծ էր դառնալու... Դրա համար էլ արժե տպագրել նրա ժառանգությունը հենց այս վիճակում»:

Այսօր բանաստեղծության սիրահար Դավիթը կլիներ 25 տարեկան: Նրա ծննդյան 25-րդ տարելիցին էր նվիրված Դավթի հարազատ բակում հուլիսի 1-ին կայացած հանդիսությունը, որը մեծ թվով մարդկանց էր հավաքել: Ներկա էին անվանի գրողներ, լրագրողներ, ուսուցիչներ, պոեզիայի երկրպագուներ: Պատարագի արարողությունը կատարում էր Սուրբ Հարավոր եկեղեցու քահանա Տեր-Գեւորգը:

Պատանի Դավթի մասին գնահատականի, ցավի եւ ափսոսանքի խոսքեր են ասում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեւորգ Դարիբջանյանը, Հրանտ Մաքեւոսյանը, Գուսան Համազասպը, Արամայիս Սահակյանը, բանաստեղծության դոկտոր Սամվել Սուրադյանը, Պերճ Զեյթունցյանը եւ էլի շատերը: Ներկաները ունկնդրում են Սվետլանա Խանումյանի ասմունքը՝ հնչում են Դավթի բանաստեղծությունները: Աշ պատգամավոր, հեռուստադրող Սերգեյ Երիցյանն ազդարարում է, որ Դավթի հիշատակը հավերժացնելու նպատակով ՀՀ տեղեկատվության նախարարությունը սահմանել է լավագույն մանկապատանեական գրքի ամենամյա մրցանակ: Այնուհետ ներկաները այցելում են գորավար Անդրանիկին եւ Շիրազին նվիրված հուշ-սենյակները:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Յուցահանդես՝ նվիրված հայ պատմիչներին

Հին եւ միջին դարերում պատմական երկերի հեղինակներին անվանում էին պատմիչներ: Նրանք նկարագրում էին երկրի կյանքում տեղի ունեցող իրադարձություններն ու դեպքերը, վերլուծում էին հասարակական-քաղաքական իրադարձությունները:

Գրադարանային ֆոնդերի անմակտելի մասն են կազմում նաեւ պատմիչների գրքերը, որոնք լույս են տեսել աշխարհի զանազան վայրերում Թիֆլիս, Վենետիկ, Մոսկվա... Անցած տասնամյակներում գգալի էր «Հայաստան» հրատարակչության աշխատանքը, որի շնորհիվ «Հայ մատենագիրներ» մատենաշարով լույս տեսան տասնյակ գրքեր: Իսկ վերջին շրջանում Երեւանի համալսարանի հրատարակչությունը դրանք գրաբար եւ աշխարհաբար տեքստերով լույս ընծայեց «Ռուսաստանի գրադարան» մատենաշարով:

Հայ պատմիչների երկերի բարգմանության ու վերլուծության գործում մեծ է դերը մի շարք լեզվաբանների ու պատմաբանների, Ստեփանոս Մալխասյանց (Մովսես Խորենացի «Պատմութիւն հայոց», Փավստոս Բյուզանդ «Պատմութիւն հայոց»), Աշոտ Աբրահամյան (Եղիշե Կողբացի «Մեծ աղանդոց», Ստեփանոս Օրբելյան «Պատմութիւն նահանգին Սիսականայ»), Հիշենք նաեւ Վարագ Սարգսյանի, Հրաչ Բարթիկյանի, Արամ Տեր-Ղեւոնդյանի, Վարդան Վարդանյանի, Գեւորգ Թոսունյանի, Վրեժ Վարդանյանի բարգմանությունները:

Օրերս Հայաստանի Ազգային գրադարանում բացված «Հայ պատմիչներ» ցուցահանդեսում ներկայացված են տարբեր տարիների մի շարք հրատարակությունները, ինչպես նաեւ պատմիչների մասին Ստեփանոս Մալխասյանցի, Մկրտիչ Մկրյանի, Վայե Նալբանդյանի, Ստեփան Մելիք-Բախչյանի եւ ուրիշների աշխատությունները: Ցուցահանդեսում տեղ են գտել նաեւ բեւեռոր խոսքեր. «Հոգեւոր իմաստությամբ կարելի է հաղթել մեծ զորությանը» (Ս. Խորենացի): «Բոլոր առաքինություններից գլխավորը հավերժությունն է (Եղիշե)

ՏՊՈՅԱՆ ՀՈՒՐԱՏԱՆ

ՏԱՍՍՈՍ

Նմանակների թատրոնը Հայաստանում

Յոթերորդ եւ բալետի դեպքերոնում հուլիսի 17-ին և 18-ին հյուրախաղերով հանդես կգա մոսկովյան նմանակների թատրոնը «Նոու իլյուզիոն» ներկայացումով: Ներկայացման մեջ սպասվում է հանդիպում հաղթական յոթնյակներ Գորբաչովի եւ Ելցինի, Լենինի, Ստալինի, Բրեժնեւի, ինչպես նաեւ խորհրդային երգիչներ Ալլա Պուգաչովայի, Ֆիլիպ Կիրկորովի, Նատաշա Կարալյովայի, Իգոր Նիկոլաեւի եւ Սոֆիա Ռոտարուի նմանակների հետ:

Մահագավ Մարգո Հեմինգուեյը

Մահագավ Մարգո Հեմինգուեյը՝ ամերիկյան հայտնի «բոհեմոդել» ու դերասանուհին, հայտնավոր գրող Էռնեստ Հեմինգուեյի թոռնուհին: Դերասանուհու 2 ընկերները Մարգո Հեմինգուեյին մահացած են գտել Կալիֆորնիայի Սանտա-Մոնիկա հաղորդում տգնվող նրա սեփական տանը: Մարգո Հեմինգուեյն ընդամենը 41 տարեկան էր: 75 թվականին Ֆարեռոն Ֆիրմայի հետ դայմանագիր կնքելուց հետո նա դարձավ ԱՄՆ-ի առաջատար մոդելներից մեկը, իսկ հետագայում իր ուժերը փորձելով նաեւ որպես դերասանուհի Մարգո Հեմինգուեյը նկարահանվեց մի շարք կինոֆիլմերում: Գ. Ե.-Տ.

ԱՌՕՐ

Մարզական

ԵՎՐՈՊԱ-96

«Մաստերկարդը» ընտրում է «Եվրոպա-96»-ի «աստղերին»

Լավագույններին որոշում են լեգենդար Պելեն եւ Չաուչոնը

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, «Եվրոպա-96»-ի գլխավոր հովանավորներից մեկը աշխարհահռչակ «Մաստերկարդ» ֆիրման ամեն խաղի համար դրամական մրցանակներ է ասիմանել Եվրոպայի առաջնության յուրաքանչյուր հանդիպման լավագույն խաղացողի համար: Այդ արդյունքների շնորհիվ առաջնության վերջում ընտրվելու էր «աստղերի» հավաքական: Ընդհանուր առմամբ անցկացվել է 31 հանդիպում: Այդ բոլոր խաղերի արդյունքներով Լոնդոնի «Ռոյալ Գարդեն» հյուրանոցի դահլիճում ֆուտբոլի արքա Պելեն եւ լեգենդար Բոբբի Չարլտոնը հրապարակեցին ըստ «Մաստերկարդի» 1996 թ. Եվրոպայի առաջնության լավագույն խաղացողների անունները:

Դարպասապահներ.

Դեյվիդ Սիման (Անգլիա), Անդրեաս Քյոպկե (Գերմանիա)

Պաշտպաններ.

Լորան Բլան (Ֆրանսիա), Մաթիաս Զամմեր (Գերմանիա), Ռադեկ Լաստ (Չեխիա), Մարսել Դեսայի (Ֆրանսիա), Պաոլո Մալդինի (Իտալիա)

Կիսապաշտպաններ.

Դիդիե Դեշամ (Ֆրանսիա), Սթիվ Մակմանամն (Անգլիա), Պոլ Գասկոյն (Անգլիա), Ռուի Կոստա (Պորտուգալիա), Կարել Պոբորսկի (Չեխիա), Դիտեր Այլես (Գերմանիա)

Հարձակվողներ

Խրիստո Ստոիչկով (Բուլղարիա), Յուրի Ջուկաեֆ (Ֆրանսիա), Ալան Շիրեր (Անգլիա), Պավել Կուկա (Չեխիա)

Եղույթ ունենալով բազմաթիվ լուսագրողների առջև, Պելեն նշեց, որ գեղեցիկ խաղով ներկա առաջնությունում այնքան լինեն Ֆրանսիայի, Գերմանիայի, Խորվաթիայի, ինչպես նաեւ դաշտի տերերի հավակնությունները: Արժանահիշատակ են նաեւ չեխերի գաղտադրած եղույթները, որոնք, չնայած բազմաթիվ խոչընդոտների, հաղթահարեցին ամեն ինչ եւ դարձան եկան եզրափակիչ:

Եզրափակիչ խաղի հերոս Օլիվեր Բերհոֆը

«ՄԱՍՏԵՐԿԱՐԴԻ» ԲՈԼՈՐ դափնեկիրները

Խաղ	Խաղացող	Երկիր
1. Անգլիա-Շվեյցարիա	Ալան Շիրեր	Անգլիա
2. Բուլղարիա-Իսպանիա	Խրիստո Ստոիչկով	Բուլղարիա
3. Գերմանիա-Չեխիա	Մաթիաս Զամմեր	Գերմանիա
4. Դանիա-Պորտուգալիա	Պետեր Շմեյխել	Դանիա
5. Շոտլանդիա-Հոլանդիա	Գարի Մաքելիստեր	Շոտլանդիա
6. Ֆրանսիա-Ռումինիա	Յուրի Ջուկաեֆ	Ֆրանսիա
7. Իտալիա-Ռուսաստան	Պիերլուիջի Կազիրագի	Իտալիա
8. Խորվաթիա-Թուրքիա	Ռոբերտ Պրոսինեչկի	Խորվաթիա
9. Հոլանդիա-Շվեյցարիա	Դենիս Բերգկամպ	Հոլանդիա
10. Բուլղարիա-Ռումինիա	Խրիստո Ստոիչկով	Բուլղարիա
11. Պորտուգալիա-Թուրքիա	Ֆերնանդո Կոուտո	Պորտուգալ.
12. Իտալիա-Չեխիա	Ռադեկ Բեյբլ	Չեխիա
13. Անգլիա-Շոտլանդիա	Դեյվիդ Սիման	Անգլիա
14. Ֆրանսիա-Իսպանիա	Խոսե Կամինեռո	Իսպանիա
15. Գերմանիա-Ռուսաստան	Յուրգեն Կլինսման	Գերմանիա
16. Խորվաթիա-Դանիա	Դավոր Շուկեր	Խորվաթիա
17. Շոտլանդիա-Շվեյցարիա	Սթյուարտ Մաքոլ	Շոտլանդիա
18. Ֆրանսիա-Բուլղարիա	Լորան Բլան	Ֆրանսիա
19. Անգլիա-Հոլանդիա	Տեդի Շերինգհեմ	Անգլիա
20. Իսպանիա-Ռումինիա	Սերխի Բարխուան	Իսպանիա
21. Ռուսաստան-Չեխիա	Կարել Պոբորսկի	Չեխիա
22. Պորտուգալիա-Խորվաթիա	Ժոաո Վիեյրա Պինտո	Պորտուգալ.
23. Իտալիա-Գերմանիա	Անդրեաս Քյոպկե	Գերմանիա
24. Դանիա-Թուրքիա	Բրայան Լաուդրուպ	Դանիա
25. Անգլիա-Իսպանիա	Դեյվիդ Սիման	Անգլիա
26. Ֆրանսիա-Հոլանդիա	Բերնար Լամա	Ֆրանսիա
27. Գերմանիա-Խորվաթիա	Մաթիաս Զամմեր	Գերմանիա
28. Չեխիա-Պորտուգալիա	Կարել Պոբորսկի	Չեխիա
29. Չեխիա-Ֆրանսիա	Միրոսլավ Կադլեց	Չեխիա
30. Անգլիա-Գերմանիա	Դիտեր Այլես	Գերմանիա
31. Չեխիա-Գերմանիա	Օլիվեր Բերհոֆ	Գերմանիա

ՖՈՒՏԲՈԼ

«Այաքսի» ֆինալադացին. Յաարի Լիտմանեն

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՍԼԱՆՅԱՆ
Վաղանա

Մի ֆիլմ լուսագրողների վերջերս «Այաքսի» մարզիչ Լուիս Վան Գաալին հարցրեց. «Ֆինալադիայում կարո՞ղ ենք գտնել ուրիշ Լիտմաններ»: Վան Գաալը պատասխանեց. «Ոչ, տիկին: Միակ Լիտմանենը, որ կարող ենք գտնել, մեզ մոտ է»:

Չնայած իրեն ուղղված գովասանքներին, Յաարի Լիտմանենը շատ համեստ ֆուտբոլիստ է: Նա ատելություն է մյուս ֆիլմերի նկատմամբ: «Ֆինալադիայում ավել մեծ ժողովրդականություն ունեն սատուլի եւ ձյան հետ կապված մարզաձեւերը, իսկ ֆուտբոլը վերջին տեղերում է», ասում է Լիտմանենը: Առաջին տեղում հոկեյն է, որը լինելով պրոֆեսիոնալ, շատ դրամ է բերում: Մինչդեռ ֆուտբոլային խաղը հավաքում է հազիվ մի քանի հարյուր երկրպագուներ: Բայց Լիտմանենը որոշել էր դարձյալ: Հոր Օլավիի շնորհիվ, որը ժամանակին խաղացել էր ֆիննական ամենամոտիվ թիմերում եւ հավաքականում, Յաարի Լիտմանենը դպրոցական մարզվում էր Մանչեստրում, Լիսյոնում, Բարսելոնում եւ Գյոթեբուրգում: 21 տարեկան ֆինալադացուն իր կազմն ընդունեց «Այաքսը»:

Յաարի Լիտմանենը

«Առաջին մրցաշրջանը լավագույնս 1992 թ նոյեմբերից մինչեւ 1993 թ. հունիս. ամեն ինչ ուսումնասիրեցի փոխարինողների նստարանից: Ամենաբարդը դիտեցի Դենիս Բերկամպի խաղը, որն ինձ շատ բան սովորեցրեց», ասում է Լիտմանենը: Երբ «Այաքսի» ասպը Բերկամպը բիմը լքելով տեղափոխվեց Միլանի «Ինտեր», Լիտմանենը շտապով «Այաքսում» գրաղեցրեց նրա տեղը: Առաջին իսկ խաղում, որտեղ Հոլանդիայի գերազանցի մրցումներում «Այաքսը» 4-0 հաշվով հաղթեց «Ֆեյենորդին», Լիտմանենը խփեց 2 գոլ եւ հայտնվեց ուշադրության կենտրոնում: Մինչ նրա խաղընկերները մնում էին «Այաքսը», նա մնում էր բիմին հավատարիմ: «Այստեղ «Այաքսում», ես աշխարհի ամենաուժեղ բիմում եմ», ասում է Լիտմանենը, բացատրելով իր հավատարմությունը: Եվրոպայի 1995 թ. չեմպիոն Լիտմանենը չկարողացավ դառնալ կրկնակի չեմպիոն. «Վնաս չունի, դեռ ժամանակ կա», ասում է ատամնաբույժ եւ ուժեղ կամքի տեր Յաարի Լիտմանենը:

ՇՈՒՇԱ

Հայաստանի չեմպիոնի նոր հաղթանակը

Գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը շարունակում է իր գերազանց ելույթը Իսպանիայում ընթացող միջազգային մրցաշարում: Վեցերորդ տուրում հայ շախմատիստը շաս կարեւոր հաղթանակ տարավ միանձնյա առաջատար ռուսաստանցի Սերգեյ Իոնովի նկատմամբ: Այս նոր հաջողությունից հետո Հակոբյանը, Ուկրաինայի գրոսմայստեր Իգոր Նովիկովի հետ սկսեց գլխավորել աղյուսակը: Առաջատարները 6 հնարավորից ունեն 5-ական միավոր:

Մինչեւ մրցաշարի ավարտը մասնակիցները կանցկացնեն երեք կան ղարտիա: Յոթերորդ տուրում կենտրոնականը, իհարկե, Վլադիմիր Հակոբյանի եւ Իգոր Նովիկովի հանդիպումն է: Հայաստանի շեմպիոնը խաղում է սպիտակներով:

Ա. Հ.

Իրանը կմասնակցի օլիմպիադային

Նվս մեկ երկիր Իրանը հաստատեց իր մասնակցությունը շախմատի 32-րդ համաշխարհային օլիմպիադային: Այսպիսով, երեւանյան օլիմպիադայում հանդես գալու ցանկություն են հայտնել 113 տղամարդկանց եւ 81 կանանց թիմեր:

Պաշտոնական հայտերը շարունակվում են ստացվել:

Ա. Հ.

Մեկնարկեց կանանց Հայաստանի առաջնությունը

Երեւանի շախմատիստի կենտրոնական տանը մեկնարկեց կանանց Հայաստանի առաջնությունը: Ինչպես վերջերս սահմանված տղամարդկանց առաջնությունում, այստեղ էլ վերջնական արդյունքների հիման վրա կառուցվի Հայաստանի կանանց հավաքականների կազմը, որոնք կմասնակցեն 32-րդ համաշխարհային շախմատային օլիմպիադային: Նշենք, որ որպես օլիմպիադայի կազմակերպիչ, Հայաստանը այդ խոշոր շախմատային ստուգատեսին կներկայանա երկու հավաքականով: Ներկա առաջնությանը մասնակցում են 14 շախմատիստուհիներ, որոնք, ըստ միջանկահանության տեղաբաշխվել են հետեւյալ կերպ.

1. Արմինե Անդրեասյան
2. Մարիաննա Գասպարյան
3. Մարինե Ավետիսյան
4. Գոհար Հյուսաբյան
5. Նաիրա Սովսիսյան
6. Արուսյակ Գրիգորյան
7. Թամար Փիրումյան
8. Էռնա Խալաֆյան
9. Միլենա Եսայբեկյան
10. Լյուդմիլա Ալանյան
11. Նելլի Սոհինյան
12. Արմենուհի Թանասարյան
13. Աբալույս Գրիգորյան
14. Լիլիթ Մկրտչյան

Մրցաշարի ամենարարձր գործակիցն ունի մեր հավաքականի առաջատար, գրոսմայստեր Էլինա Դանիելյանը՝ 2330, նրանից հետո գալիս են Լիլիթ Մկրտչյանը՝ 2195 եւ մեր բազմափորձ Լյուդմիլա Ալանյանը՝ 2180:

Երեկ կայացան առաջին տուրի հանդիպումները:

Ա. Մ.

Պատանի բադմինտոնիստները վերադարձան Իրանից

ԵՐԵՎԱՆ, 1 ՅՈՒԼԻՍ, ՓՍՍՏ: Իրանից վերադարձան Հայաստանի պատանեկան հավաքականի բադմինտոնիստներ Հայկ Միսակյանը, Վայագան Գեւորգյանը եւ Գարիկ Սովսիսյանը, որոնք մասնակցեցին Իրանում անցկացված միջազգային մրցաշարին: Այս ստուգատեսը, որին պետք է մասնակցեին 10 երկրների ընտրանիներ, այնքան էլ լավ կազմակերպված չէր եւ միայն վերջին պահին հայտնի դարձավ, որ մրցաստարեզ դուրս կգան երեք երկրների պատվիրակներ: Հայաստանցի մասնակիցներից բոլորից հաջող հանդես եկավ Վայագան Գեւորգյանը, որը կիսեց 9-16-րդ տեղերը: Ի դեմ, նա եւ Գարիկ Սովսիսյանը նախապատրաստվում են աշնանը Դանիայում կայանալիք մարզաձեւի աշխարհի պատանեկան առաջնությանը:

Հայ վետերանների հաղթական վերադարձը

ԵՐԵՎԱՆ, 1 ՅՈՒԼԻՍ, ՓՍՍՏ: Լիլեհամերում վերջերս անցկացվեց սեղանի թենիսի աշխարհի վետերանների 8-րդ առաջնությունը, որին մասնակցեցին 52 երկրների 2400 մարզիկներ: Մրցաշարի հեղինակության մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ Ատլանտայի օլիմպիական խաղերին կմասնակցեն 5000 մարզիկներ աշխարհի 197 երկրներից: Հետաքրքիր է, որ նորվեգական այս փոքր խաղաքարի մարզաղալատում սեղանների շուրջ հարաբերությունները պարզեցին ոչ միայն անցյալի հանրահայտ մարզիկ-մարզուհիները, այլեւ սիրողական կարգ ունեցողները: Ստուգատեսում Հայաստանը ներկայացրին միջազգային կարգի սպորտի վարպետներ, ԽՍՀՄ հավաքականի կազմում Եվրոպայի չեմպիոն եւ աշխարհի փոխչեմպիոն դարձած Էմիրա Անտոնյանը եւ նրա մեկ այլ անվանի խաղընկերուհի Ռիտա Պողոսովան: Նրանք հանդես եկան 40-50 տարեկանների մրցաշարում: Կրկին փայլեց Էմիրա Անտոնյանը, որը, կարծես թե վերսին ձեւ էր բերել երկրորդ երիտասարդությունը: Նա խմբային մրցաշարում տոնելով երեք հաղթանակ, իրավունք նվաճեց մասնակցելու եզրափակիչ փուլին: Այստեղ նա Էմիրան մրցակցությունից դուրս էր: Իրար հետեւից առավելության հասնելով 6 մրցակցուհիների, Էմիրան դարձավ աշխարհի չեմպիոն: Մի փոքր անհաջող էր Ռիտա Պողոսովայի մեկնարկը, որին այդպես էլ չհաջողվեց հաղթահարել նախնական արգելքը: Որպես փոխհատուցում Ռիտան իրավունք նվաճեց մասնակցելու այսպես կոչված սփոփիչ մրցաշարին, որտեղ չունեցավ իրեն հավասարը: Զուգախաղերում Պողոսովա-Անտոնյան զույգը չկարողացավ հասնել նշանակալի հաջողության:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Իր տիեզերական էներգիայով բուժումներ է սկսել ժողովրդական բժշկուհի

ՇՈՂԻԿ ԱՍՄԱՐՅԱՆԸ,

որը բազմաթիվ հիվանդների կրանք է վերադարձրել, բուժելով ամենաբարդագույն հիվանդություններ:

Կարճաստեսություն, սուր գլխացավեր, նյարդային համակարգի հետ կապված բազմաստեսակ հիվանդություններ, արյան բարձր ճնշում, բազմաստեսակ տրոֆիկ խոցեր, ստամոքսաաղիքային տրակտի, երիկամային քարերի հիվանդություններ:

Երեւան-Արարատյան 1-ին զանգված, Շահումյան 1 փ., ե. 10, հեռ. 77-68-62

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ըստ կանխատեսումների՝ կհաղթի նախագահ Բորիս Ելցինը, բայց...

"Умом Россию не понять, аршином общим не измерить"

Սկիզբը էջ 1

Պրոֆեսոր Համարում է, թե Խորհրդային Միությունում ոչ բոլոր ընտրողներն են հետևում նախընտրական հեռուստաեթերին, այդ թվում կամ կրթահասանի լավ, կամ էլ կասի չգիտեմ: Այնպես որ, Ելցինի փաստաբաղ լինելն ընտրությունների արդյունքների վրա չի ազդի: Ընտրողների ակտիվությունը, սակայն, շատ գործոններից է կախված. ընտանեկան խնդիրներից, սեփական ամառանոցում կամ աշխատանքի վայրում զբաղված լինելուց և այլն: Կան նաև ոչ օբյեկտիվ գործոններ: Շատերը մտածում են. «Ես ոչ մի բեկնածուի էլ չեմ հավատում», կամ «Չեմ կարծում, թե այս ընտրությունները որևիցե բան կարող են փոխել», և կամ «Միևնույն է, ընտրությունների արդյունքները կկեղծվեն» և այդպես մտածելով մարդիկ չեն մասնակցում ընտրություններին: Սոցիոլոգները կանխատեսում են սակայն, որ հունիսի 3-ին ընտրական տեղամասեր կգա ընտրողների մոտ 66 տոկոսը: Ընտրողների բարձր ակտիվությունն ապահովելու համար Ռուսաստանի հեռուստատեսությունը որոշել է հանրահայտ «Արեւադարձոտ զարնի էր» բազմասերիանոց հեռուստաֆիլմի երեք եթերավանկիչ սերիաներ ցուցադրել ընտրությունների օրը առավոտից սկսած, որոնցի կինոդիվան բազմաթիվ սիրահարներն այդ օրը չհեռանան իրենց ծշտական բնակավայրերից: Սոցիոլոգները եզրակացրել են, սակայն, որ ընտրություններին մասնակցողների թիվը կարող է զգալիորեն դանակս լինել նախատեսվածից: Հարցախույզը ցույց է տվել, որ ընտրողների 38 տոկոսն է միայն ասում. «Ինչ էլ որ լինի, ես կմասնակցեմ ընտրություններին»: Սակայն խնդիրն այն է, որ ընտրողների այդ կարգադրան մասը հենց Զյուգանովի կողմնակիցներն են: Այնպես որ, ընտրությունների արդյունքներն Լադես կախված կլինեն այն հանգամանքից, թե ընտրողների ո՞ր տոկոսը կգա ընտրական տեղամասեր: Ենթադրվում է, որ եթե ընտրողների առնվազն 65 տոկոսը մասնակցի ընտրություններին, ապա Ելցինի հաղթանակն ապահովված կլինի:

Պրոֆեսոր Բեսանեկյոն ինստիտուտի կանխատեսումները միշտ էլ ամենաճշգրիտն են եղել: Եվ անցյալ տարվա դեկտեմբերի խորհրդարանական և հունիսի 16-ի նախագահական ընտրությունների առաջին փուլի ամենաճիշտ կանխատեսումները Բեսանեկյոն ինստիտուտն է տվել: Իսկ Հասարակական կարծիքի ուսումնասիրության համառուսաստանյան կենտրոնը կանխատեսում է, որ եթե հուլիսի 3-ին ընտրատեղամասեր գա ընտրողների 65-70 տոկոսը, Ելցինը կստանա ձայների 53-57 տոկոսը, իսկ Զյուգանովը 37-41 տոկոսը: Մնացած ընտրողները կիվեարկեն 2 բեկնածուների դեմ: Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ Ելցինի հաղթանակն են կանխատեսում: Բայց քանի որ Ռուսաստանն անկանխատեսելի երկիր է, ապասենք ընտրությունների արդյունքներին:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավագիտության մագիստրոսի գիտական աստիճան

Տեղեկատվական հանդիպում հուլիսի 15-ին

Փաստաթղթերի ընդունման նոր վերջնաժամկետ՝ հուլիսի 22

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) բարձրանում է միջազգային և համեմատական իրավունքի մագիստրոսի գիտական աստիճան շնորհող երկամյա նոր ծրագրի համար փաստաթղթերի ընդունումը:

«Միջազգային և համեմատական իրավունք» ծրագրի հիմնական նպատակն է հնարավորություն տալ ուսանողին օժանդակել Հայաստանի ա) զարգացող շուկայական տնտեսության և բ) խաղաղականության մշակման և օրենսդրական գործընթացների իրավական հիմքերի ստեղծմանը:

Ծրագիրը համեմատական սկզբունքով կուսումնասիրի եվրոպական խաղաղագիտական իրավունքի և անգլո-ամերիկյան իրավունքի համակարգերի իրավական ավանդույթները և կունենա երկու ուղղվածություն: **Միջազգային գործարարության իրավունքի** շրջանակներում կուսումնասիրվեն շուկայական տնտեսության, միջազգային հանրային իրավունքի և միջազգային գործարքների հիմնական դրույթները, ոլորտային հարաբերությունները, միջազգային առևտրային առեւտուրը, միջազգային ֆինանսական իրավունքը և վեճերի լուծման մեթոդները: **Համեմատական սահմանադրական իրավունքի** առարկաները կընդգրկեն սահմանադրականության, իրավական կանոնակարգման, օրենսդրական նախագծման, հասարակության և անհատի իրավունքների հիմնադրագրերը, ինչպես նաև միջազգային համաձայնագրերին և դայմանագրերին վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը:

1996 թ. հուլիսի 15-ին, ժամը 17:00-ից 19:00-ը Հայաստանի ամերիկյան համալսարանում կարճատև հանդիպում կանցկացվի դիմորդների հետ՝ միջազգային և համեմատական իրավունքի ուսումնական ծրագրի և աղագա երջանավարտների համար դրա մասնագիտական արժեքի ճնարկման նպատակով:

Դիմորդները դեսք է ներկայացնեն դիպլոմ և ներդիր իրենց դաստիճաններով, եթե երաշխավորագիր նամակ, լրացնեն դիմում և ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Դիմորդները դեսք է ունենան իրավաբանական բարձրագույն կրթություն և անգլերեն լեզվի մասնակի իմացություն:

Փաստաթղթերի մասնակցության համար դիմորդները դեսք է մուտք գործեն ՀԱՀ՝ 10 դոլարանոց կանխավճարով, որը դեսք է մուտքագրեն հանձնելիս: **1996 թ. հուլիսի 22-ը** փաստաթղթերի ընդունման նոր վերջնաժամկետն է:

Բոլոր դիմորդները **1996 թ. հուլիսի 24-ին** կհանձնեն անգլերեն լեզվի իմացությունը դնահատող քննություն (բացառությամբ այն դիմորդների, ովքեր վերջերս TOEFL քննությունից ստացել են 550 և ավելի միավոր): Առաջին փուլով անցած այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության դահանջված մակարդակը, կմասնակցեն 1996 թ. սեպտեմբերից մինչև 1997 թ. փետրվարի վերջը ՀԱՀ-ում անցկացվող անգլերեն լեզվի առագացված ծրագրին: Անգլերեն լեզվի առագացված ծրագրի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 180 դոլարին համարժեք դրամ: Նախնական ծրագիր ընդունվելը 1996 թ. օգոստոսի սկզբին, որոշ դիմորդների հետ հարցազրույցներ կանցկացվեն: Դիմորդների անունները ու հարցազրույցների ամսաթվերը կփակցվեն անգլերեն լեզվի քննությունից հետո:

Դասընթացները կանցկացվեն օրվա երկրորդ կեսին՝ ուսանողներին նաև աշխատելու հնարավորություն տալու համար:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի, նախադասրասական փուլում դիմորդների ցուցաբերած առաջադիմության և LSAT կամ GRE քննության արդյունքների հիման վրա: Հիմնական ծրագիրը կսկսվի 1997 թ. ծառին: անգլերեն լեզվի առագացված ծրագրի ավարտից անմիջապես հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ: Հասցե՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոսներ՝ **58-81-15, 27-16-29:**

Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները դեսք է ՀԱՀ կրթության եւ գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո երեք տարի Հայաստանում մնալու եւ աշխատելու դայմանագիր: ՀԱՀ-ը բացառում է ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրականությունը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքներ. Թուրքիայի դեմ Կիպրոսի հայցն ընդունված է

ՓԱՐԻԶ, 2 ՀՈՒԼԻՍ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովն ընդունել է Թուրքիայի դեմ Կիպրոսի հայցը Անկարայի կողմից մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների դաշնադրության եվրոպական կոնվենցիայի մեկուկես տասնյակ դրույթների խախտման համար, որոնք կատարվել են թուրքական զորքերի գրաված կղզու հյուսիսային մասում: Հանձնաժողովը հարկ է համարել, որ Կիպրոսի հայցը կարող է ընդունվել քննարկման: Թուրքական կողմի փաստարկները չեն ընդունվել:

Իսրայելցիները գործադուլ են անում

ԹԵԼ ԱՎԻՎ, 2 ՀՈՒԼԻՍ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Իսրայելի դեսական սեկտորի հիմնարկների եւ ձեռնարկությունների շուրջ 500 հազար բանվորներ եւ ծառայողներ բողոքի նախազգուշական գործադուլ են արել նոր կառավարության տնտեսական ծրագրի եւ աշխատավարձերի բանկացման դեմ: Գործադուլի առիթ է ծառայել «Լիկոնոմիկայի առողջացման» ծրագիրը, որը կառավարության նիստում առաջարկել է Իսրայելի ֆինանսների նախարար Դան Մերիդորը:

Եվրախորհուրդն ամրապնդում է կապերը կովկասյան երկրների հետ

ՓԱՐԻԶ, 2 ՀՈՒԼԻՍ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Եվրոպայի խորհուրդը կովկասյան հանրապետությունների հետ կապերի ամրապնդման կուրս է վերցրել. Ադրբեջանին եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում հատուկ հրավիրյալի կարգավիճակ տրամադրելուց անմիջապես հետո կազմակերպության ղեկավարությունը դատրաստվում է այցելել Բաքու, Երեւան եւ Թբիլիսի: Ինչպես Ստրասբուրգում հայտարարվել է խորհրդի կենտրոնակայանում, հուլիսի 12-17-ին ուղեւորության կմեկնեն եվրախորհրդի նախարարների կոմիտեի նախագահ, էստոնիայի արտաքին գործերի նախարար Սիյմ Կալասը եւ եվրախորհրդի գլխավոր քարտուղար Դանիել Տարշիսը: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, «այն բանից հետո, երբ Ադրբեջանը Հայաստանից եւ Վրաստանից անմիջապես հետո եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում ստացավ հատուկ հրավիրյալի կարգավիճակ, կովկասյան տարածաշրջանը էլ ավելի է մերձենում մեծ ժողովրդավարական եվրոպային, որն արդեն իսկ դրական իրողություն է դարձել», անցյալ շաբաթ վեհաժողովի նստաշրջանում հայտարարել է եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լենի Ֆիշերը:

ՍՊՈՐ

ՀՀ տարածքում գտնվող բոլոր դեսական, մասնավոր, վարձակալական եւ կոդերատիվ շինարարական կազմակերդություններին

Մրցույթի մասնակցության հրավեր
ՀՀ-ում ՄԱԿ-ի շենքի 4-դ հարկի (տանիքի) վերակառուցման եւ կարդիտալ վերանորոգման համար:

Մրցույթին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկատվությունը կարելի է ստանալ ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակում ամեն օր՝ ս.թ. հուլիսի 1-ից 10-ը, ժամը 9-13-ը հետեւյալ հասցեով՝ Կաղ Լիբկնեխտի 14, (Էրեբունի հյուրանոցի բակում):

Մրցույթի հայց ներկայացնող յուրաքանչյուր մասնակցից դահանջվում է ներկայացնել բանկային երաշխավորագիր կամ կանխիկ վճարում 50 ԱՄՆ դոլար (համարժեքը դրամով) չափով յուրաքանչյուր հայցի համար:

Բանկային երաշխավորագիրը կամ վճարված գումարը չի վերադարձվում, եթե մրցույթի հաղթողը հրաժարվում է իր առաջարկից: Մյուս մասնակիցների կողմից վճարված գումարները կվերադարձվեն մրցույթի արդյունքների հրադարակումից հետո:

Հայցերը ընդունվում են՝ մինչեւ ս.թ. հուլիսի 11-ը ժամը 15:00 եւ կբացվեն հուլիսի 11-ին ժամը 16:00՝ մրցույթի մասնակիցների ներկայությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՊԱՇԻ ՀՈՎՆԱԹԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Հրավիրում է սովորելու

Կերպարվեստի, երգ երաժշտության, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնության, ռեժիսուրայի, արվեստի ասպետության եւ մոդելավորման բաժիններում:

Համալսարան կարող են ընդունվել ութամյա եւ միջնակարգ կրթությամբ 15 տարեկանից բարձր արվեստասեր երիտասարդները: Ուսման տեւողությունը՝ 3 տարի: Դասավանդվում են հանրագիտության անվանի արվեստագետ դասախոսները: Ուսումնառության հետ մեկտեղ կազմակերպվում են գործնական դասընթացներ՝ ցուցահանդեսներ, հանդիպումներ, գրական-գեղարվեստական միջոցառումներ, էքսկուրսիաներ: Ավարտողներին կտրվի մասնագիտությանը համապատասխան ուսանողական դիպլոմ:

Դիմումները ընդունվում են 1996թ. հունիսի 15-ից մինչեւ ս/թ սեպտեմբերի 10-ը, ամեն օր ժ. 11-ից մինչեւ 17-ը (բացի շաբաթ եւ կիրակի օրերից):

Քննությունները՝ սեպտեմբերի 12-ից:

Դասերը՝ հոկտեմբերի 1-ից:

Կերպարվեստի եւ դեկորատիվ արվեստի բաժինների դիմորդների համար կազմակերպվում են դժանկարի երեկոյան նախադասրասական դասընթացներ, որոնք կանցկացվեն հուլիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը:

Հասցեն՝ Երեւան, Մ. Խորենացու փ. 26 ա, Առեւտրի տուն, 5-րդ հարկ, հեռ. 52-18-03

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաջարկի* եւ *դահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Գարեգանյան» հրատարակչության տարածք, Երեւան-73, Մուսայելյան 2. Գրանցման թիվ 65. Գնալ 69149. Պատվեր 2126. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 2.07.1996. Գինը 75 դրամ